



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 58-Ա

«31» հոկտեմբերի 2016թ.

2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի աշխատանքային ծրագիրը՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի նոյեմբեր ամսվա ստուգումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրապարակել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի նոյեմբեր ամսվա ստուգումների և գործողությունների ժամանակացույցները՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ՝

Ա. Կարապետյան

*ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 58-Ա կարգադրության*

**2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

N	Գործողության անվանումը	Կատարման պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.	ՀՀ Շիրակի մարզի թվով 47 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքների արտագնա քննարկում	ՎԳԲ	II տասնօրյակ
2.	ՀՀ Սյունիքի մարզի թվով 24 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություններ	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	I,II,III տասնօրյակներ
3.	ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում ուսումնասիրություն	Ուսումնասիրություն իրականացնող խումբ	I,II տասնօրյակներ
4.	Դիմումներում և բողոքներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	I,II,III տասնօրյակներ

Հավելված 1

*ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2016 թվականի հոկտեմբերի 31-ի N 58-Ա կարգադրության*

**2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

h/h	Ստուգվող սուբյեկտի անվանումը	Ստուգման ժամկետները
1.	Տեսչավորումներ Երևանի զարդակիրառական արվեստի և ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի, Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարաններում	I,II տասնօրյակներ
2.	Ստուգումներ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թվով 14 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I տասնօրյակ
3.	Ստուգումներ ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանի թվով 8 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I,II տասնօրյակներ